ԿԱՐԾԻՔ

ՎԱՀԱԳՆ ԳԱՌՆԻԿԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ «ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ԸՆԴԵՐՔԻ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը. 00.02. - «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակների ընթացքում շուկայական տնտեսությամբ և անցումային երկրներում ձևավորվում է տնտեսության նոր ինստիտուցիոնալ ենթակառուցվածք, որի հիման վրա զգալի փոփոխություններ են կատարվում պետության և մասնավոր հատվածի միջև ձևավորված տնտեսական հարաբերությունների համակարգում: Փոփոխություններն ընդգրկում են տնտեսական գործունեության գրեթե բոլոր ոլորտներն ու կատարվում են պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների բոլոր մակարդակներում՝ կազմակերպական, գործառույթների, ֆինանսական և այլն: Ի հայտ են գալիս պետության և մասնավոր հատվածի համագործակցության նոր ձևեր, մասնավոր գործարարությունը ներթափանցում է այնպիսի ոլորտներ, որոնք ավանդաբար պետության մենաշնորհն են հանդիսացել:

Այս պայմաններում արդիական է դառնում հետևյալ հարցը՝ առավելությունը տալ պետակա՞ն, թե՞ մասնավոր ձեռնարկատիրությանը: Մի կողմից, անցումային տնտեսություններում առաջանում է պետության տնտեսական գործունեության ակտիվացման անհրաժեշտություն՝ պայմանավորված առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, պետական ձեռնարկատիրության նկատմամբ մասնավոր ձեռնարկատիրության առավել բարձր արդյունավետության ապացույցները մասնագիտական գրականության մեջ և տեսական ու գործնական հետազոտություններում մեծամասամբ բավականաչափ համոզիչ են ու անառարկելի: Հայաստանում շուկայական վերափոխումների ժամանակահատվածում փոփոխության ենթարկվեցին ինչպես պետական տնտեսական կարգավորման մեխանիզմներն, այնպես էլ պետական ձեռնարկատիրության ոլորտներն ու ծավալները: Ընդհանուր առմամբ, պետական ընկերություններում շահադրդվածության պակասը հատուկ է բոլոր երկրներին: Սակայն, եթե զարգացած երկրներում դրա հաղթահարման համար կիրառվում են մասնավոր հատվածի հետ համագործակցության բազմաթիվ մեթոդներ, ապա զարգացող երկրներում այդ խնդիրները դեռևս լուծման ընթաց-

քում են, որի հիմքով ի հայտ է գալիս պետական ձեռնարկատիրությանը բնորոշ ավանդական անարդյունավետությունը հաղթահարելու նոր մեթոդների կիրառման հրամայականը:

Վերը նշվածով է պայմանավորված հետազոտության համար ընտրված թեմայի արդիականությունը:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության առաջին՝ «Պետության և շուկայի փոխառնչությունները հանրային ռեսուրսների կառավարման համատեքստում» գլխում ներկայացվել են պետության դերի ժամանակակից ընկալումները, պետություն և շուկայի փոխառնչությունների ինստիտուցիոնալ հիմքերը, ինչպես նաև փորձ է արվել երկրի տնտեսական անվտանգությունը գնահատել «պետություն-շուկա» հարաբերությունների համատեքստում:

Հեղինակի անդրադարձը հանրային ռեսուսներին ելնում է հենց պետության և շուկայի փոխառնչություններից: Եվ հենց վերջինիս ժամանակակից դրսևորումներով են պայմանավորված լինելու հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, դրա բարելավման ուղիները կամ հնարավորությունները:

Պետություն-շուկա հարաբերությունները քննարկելիս հնարավոր չէ շրջանցել ինստիտուտներին վերաբերող հարցադրումները: Ներկայումս այլևս կասկածի տակ չի դրվում ինստիտուտների կարևորության հարցը, ավելին, կա արդեն ձևավորված տեսակետ, թե ինչու ոչ բոլոր երկրներն են փորձում լավ ինստիտուտներ ստեղծել:

Հեղինակն անդրադարձել է նաև տնտեսական անվտանգությանը, հաշվի առնելով այն, որ զարգացման արդի փուլում գլոբալացման և տնտեսական ինտեգրման գործընթացը յուրաքանչյուր երկրի առջև ոչ միայն նոր հեռանկարներ և հնարավորություններ է բացում, այլև՝ կարող է նոր վտանգների (ռիսկերի) և ճգնաժամերի պատճառ

դառնալ: Կատարվել է տնտեսական անվտանգության ռիսկերի գնահատում Հարավ-կովկասյան տարածաշրջանի երկրների ընդգրկմամբ, որն իրականացվել է նաև մեկ այլ մեթոդի կիրառմամբ, որը հնարավորություն է ընձեռում մատրիցի միջոցով բացահայտել տնտեսական անվտանգության սպառնալիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Շուկայի կայացման և հանրային ռեսուրսների (ընդերքի և ջրային) կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում», գլխում հետազոտվել են Հայաստանի Հանրապետությունում առաջարկի և պահանջարկի ձևավորման ու կառավարման առավել նշանակալի խնդիրները, գնահատվել են հանքարդյունաբերության կառավարման ոլորտում ի հայտ եկող հիմնական տնտեսա-բնապահպանական հիմնախնդիրները, ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների օգտագործման վիճակը և հիմնախնդիրները:

Հեղինակի կողմից վերլուծվել են ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի վրա տնտեսական գործոնների ազդեցությունը, կառուցվել է ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի դինամիկ մոդել և ուսումնասիրվել են այդ մոդելում դիտվող տեղաշարժերը՝ տնտեսության զարգացման ռազմավարությունը կանխորոշելու նպատակով:

Վերոնշյալի համատեքստում, հեղինակն իր ուսումնասիրությունը կենտրոնացնում է ընդերքի՝ որպես հանրային ռեսուրսի, երկու կարևորագույն բաղադրիչի՝ հանքարդյունաբերության և ջրային ռեսուրսների ուսումնասիրության վրա:

Հայաստանի Հանրապետությունը՝ չունենալով հանքարդյունաբերության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, առաջնորդվելով բացառապես միջնաժամկետ ծրագրերով, այսօր լրջագույն խնդիրների առջև է կանգնել՝ անվերահսկելի բնապահպանական խնդիրներ, հանքերի կամ պոչամբարների փլուզում կամ դրա պոտենցիալ վտանգ: Այդուհանդերձ, ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին և բնապահպանական խնդիրներով հանդերձ, ոլորտը Հայաստանի տնտեսության համար էական ազդեցություն ունեցող տնտեսական միավոր է:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում խիստ կարևորվում են ջրային ռեսուրսների օգտագործման հիմնահարցերը, ուստի պետությունների մեծ մասն ունի այդ ռեսուրսների օգտագործման ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ռազմավարություններ: Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ անկախությունից ի վեր ՀՀ-ում այդպես էլ չձևավորվեց գիտականորեն հիմնավորված ու հետևողականորեն կենսագործվող ջրային ռեսուրսների կառավարման ամբողջական տեսլականը՝

երկրի տնտեսության երկարաժամկետ զարգացման կտրվածքով, որով կսահմանվեր ոլորտի զարգացմանն ուղղված համակարգված գործողությունների փաթեթը: Նկատի ունենալով ջրային ռեսուրսների բացառիկ նշանակությունը, հեղինակը կարևորում է ՀՀ ջրային ռեսուրսների օգտագործման համալիր զարգացման ծրագրերի մշակումը և օրենքների տեսքով հաստատումը:

Ատենախոսության երրորդ՝ «Հանրային ռեսուրսների՝ ընդերքօգտագործման և ջրային ռեսուրսների կառավարման կատարելագործման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում գնահատվել են Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը և զարգացման միտումները, բացահայտվել են հանքարդյունաբերության արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները, ինչպես նաև առաջադրվել են մեխանիզմներ ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման կատարելագործման ուղղությամբ:

Հեղինակը ՀՆԱ-ի փոփոխությունների վերլուծության միջոցով փորձ է արել ներկայացնել տնտեսության ընդհանուր վիճակը և վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք տարիների ընթացքում լուծում չստանալով, այսօր խոչընդոտում են երկրի առաջընթացին: Միաժամանակ տրվել են նաև գնահատականներ տարբեր ժամանակահատվածներում ՀՆԱ-ի վրա առանձին գործոնների ազդեցության վերաբերյալ:

Այսօր հանքաարդյունաբերության ոլորտում ռիսկերի նվազեցման գործիքները պետք է ներառեն բնական հանածոների արդյունահանումը սահմանափակող կանոնների խստացումը, արդյունահանող ընկերությունների կողմից բնությանը հասցված վնասի մեղմման և դրանց վերացման ֆինանսական երաշխիքների տրամադրումը, ժամանակակից տեխնոլոգիաների և մոնիտորինգի ու գնահատման համակարգերի կիրառումը: Դրանք իրականություն դարձնելու համար հեղինակն առաջարկում է՝ մշակել հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարություն, իրականացնել ոլորտի բնապահպանական և սոցիալական հիմնական հարցերի, ինչպես նաև տեխնոլոգիաների գնահատում, գնահատել չօգտագործվող հանքավայրերի կամ նրա տեղամասերի հետագա օգտագործման հնարավորությունները, ինչպես նաև բնապահպանական ռիսկերը:

Անդրադառնալով ջրային ռեսուրսների ուսումնասիրությանը, հեղինակը փաստում է, որ ՀՀ Ջրային օրենսգրքի ընդունումից հետո համակարգի գործունեությունը ամենևին էլ չի բարելավվել, հակառակը՝ ավելացել են համակարգում կատարվող ծախսերը, պարտքերը, միաժամանակ նվազել է կառավարման արդյունավետությունը: Նման իրավիճակի հիմնական պատճառներից մեկն այն է, որ ջրային համակարգերի օգտագործման՝ ՀՀ Ջրային օրենսգրքով սահմանված ձևերից մինչ օրս կիրառվել է միայն ջրային համակարգերի անհատույց օգտագործման իրավունքը: Ուստի, հեղի-

նակն առաջարկում է ՀՀ Ջրային օրենսգրքում ավելացնել ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման նոր ձևեր, որոնք կապահովեն կառավարման բարելավում, մասնավոր սեփականության մուտք տվյալ համակարգեր:

Եզրակացություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հիմնավորվել է հանրային ռեսուրսների կառավարման լավագույն հարաբերակցության ձևավորման և, որպես հետևանք՝ արդյունավետության բարձրացման նպատակով պետություն-մասնավոր գործընկերության շրջանակների ընդլայնումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական քաղաքականության մեջ առաջարկի տնտեսագիտության նախընտրելիությունը, առաջարկվել է տնտեսական արդյունավետության և բնապահպանական հավասարակշռության պահպանման նպատակով ընդերքի գնագոյացման հաշվարկներում ներառել նաև շրջակա միջավայրին հասցված վնասի և դրա վերականգնման հետ կապված ծախսերը, ինչպես նաև առաջարկվել է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված ձևերից բացի օրենսդրությանբ նախատեսել նաև նոր ձևեր՝ ապահովելով նշված ձևերի միջև ազատ մրցակցություն:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու անցման փուլում գտնվող երկրներում հանրային կապիտալի կառավարման քաղաքականության քաղաքականության իրականացմանն ուղղված հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել տնտեսության հանրային ռեսուրսների կառավարումն ուսումնասիրող ծրագրերի իրատեսականությանը, հանքարդյունաբերության և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում պետության և մասնավոր հատվածի հարաբերությունների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Ատենախոսության առաջին երկու ենթագլուխներում հեղինակը բավականին հանգամանալից անդրադարձ է կատարում պետության դերին, վերջինիս վերահմաստավորմանը, պետության և շուկայի փոխառնչություններին, ինչպես նաև դրանց ինստիտուցիոնալ հիմքերին: Ընդունելով հանդերձ ատենախոսի ներկայացրած դրույթների հիմնավորվածությունը, կարծում ենք, որ հետազոտության այդ մասի առարկայականության տեսակետից ավելի շահեկան կլիներ, եթե հեղինակն իր հետազոտությունները զուգորդեր քանակական հաշվարկներով: Մասնավորապես՝ տնտեսության մեջ պետության «ներկայության» ցուցանիշների (օրինակ՝ պետական ծախսեր/ՀՆԱ, պետական սեփականության տեսակարար կշիռ, հարկեր/ՀՆԱ և այլ ցուցանիշների), ինչպես նաև տնտեսության ինստիտուցիոնալ զարգացումը բնորոշող համաթվերի և այլ ցուցանիշների (Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ-ի, ՎԶԵԲ-ին և այլ կազմակերպությունների կողմից հաշվարկվող) համեմատական վերլուծության միջոցով հաստատեր տնտեսական զարգացման վրա պետության մասնակցության չափի և դրա դինամիկայի, ինչպես նաև ինստիտուցիոնալ գործոնների էական և շարունակական ազդեցությունը:

2. Ատենախոսության 1.3. ենթագլխում, հետազոտելով տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, հեղինակն անուղղակիորեն հեռանում է ատենախոսության շրջանակից: Խոսքը հատկապես վերաբերում է սոցիոլոգիական հարցմանն ու վերջինիս արդյունքներին, որոնք, ըստ էության, անուղղակիորեն են առնչվում հանքարդյունաբերության և ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության խնդիրներին:

3. Ատենախոսության 2.1. ենթագլխում, հետազոտելով Հայաստանի Հանրապետությունում ամբողջական առաջարկի և պահանջարկի կառավարման հիմնախնդիրները, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ մեր հանրապետությունում մակրոտնտեսական քաղաքականությունը պետք է ուղղորդվի առաջարկի ավելացման ուղղությամբ (այսպես կոչված, առաջարկի տնտեսագիտություն): Կարծում ենք, ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակը փորձեր աշխատանքի այս մասում ստացած իր արդյունքները տարածել ատենախոսության հետագա շարադրանքում՝ ի դեմս հանքարդյունաբերության և ջրային ռեսուրսների կառավարման:

4. Աշխատանքի 2.2. ենթագլխում հեղինակն իրավացիորեն բարձրացնում է օգտակար հանածոների վերամշակման արտադրության փակ և ավարտուն ցիկլերով կազմակերպելու, ինչպես նաև դիտարկում է հանքավայրերի շահագործման էկոլոգիական ռիսկերի հետ կապված խնդիրները: Մեր կարծիքով, ատենախոսությունը կշահեր,

եթե փորձ արվեր ստանալ ավարտուն ցիկլով վերամշակման (թեկուզ մեկ ընկերության օրինակով) և բնապահպանական ազդեցության ռիսկերի քանակական պատկերը: Այսինքն, գնահատվեին դրանց էֆեկտները կամ, այլ կերպ ասած, «հարցի արժեքը»:

5. Աշխատանքի 3.1. ենթագլխում հեղինակը հետազոտում է տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը և եզրահանգում, որ խիստ կարևոր է տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակումը: Հետազոտության ամբողջականության տեսակետից, առավել շահեկան կլիներ կոնկրետացնել և գնահատել այն գերակայությունները, որոնք, ի վերջո, կարող են բարելավել տնտեսության կառուցվածքային անհամամասնությունները:

6. Հետազոտության 3.3. ենթագլխում, անդրադառնալով ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման կատարելագործմանը, ատենախոսն առաջարկում է ջրային ռեսուրսների կառավարումն ավելացնել նոր՝ առավել առաջադիմական ձևերով:

Խնդիրն այն է, որ ՀՀ Ջրային օրենսգրքով ամրագրված հինգ ձևերը բավականին բազմազանություն կարող են ապահովել (այլ խնդիր է, որ դրանք պատշաճ չեն օգտագործվում):

Այս տեսակետից, հեղինակի առաջարկները «Պետություն-մասնավոր հատված համագործակցության» շրջանակներում համագործակցության նոր ձևերի ներառման վերաբերյալ, ըստ էության, հիմնականում տեղավորվում են ներկայիս օրենսդրական դաշտի սահմաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ հանքարդյունաբերության արդյունավետ զարգացմանը և ջրային ռեսուրսների կառավարմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Վ.Խաչատուրյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բարձր մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետությունում հանրային բարիքների կառավարման քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ հանքարդ-

յունաբերության և ջրային համակարգերի պետական կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Վահագն Գառնիկի Խաչատուրյանի «Հանրային ռեսուրսների կառավարման բարելավման հիմնական ուղիները Հայաստանի Հանրապետությունում (ընդերքի և ջրային ռեսուրսների օրինակով)» թեմայով թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Ը.00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏՆՕՐԵՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն.ԴԱՐԲԻՆՅԱՆ
12.05.2020թ.